



2016թ. հունիսի 10-18-ը Հայաստանից Ֆրանսիա մեկնած պատվիրակությունը մասնակցել է Լիոնում կայացած Հողաշեն կառույցներին նվիրված XII միջազգային կոնգրեսին: Պատվիրակության կազմում է եղել նաև Երևանի քաղաքապետարանի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանը:

Լիոն կատարած այցի շրջանակում հայկական պատվիրակության անդամներից երեքը՝ Լ.Ղազարյանը, Է. Հարությունյանը, Հ. Պետրոսյանը, հանդես են եկել հողաշեն կառույցների ճարտարապետության, պահպանության խնդիրների վերաբերյալ զեկույցներով:



Գիտաժողովին մասնակցություն են ունեցել աշխարհի 70 երկրների շուրջ 800 մասնակիցներ: Հայկական պատվիրակության համար հիշարժան է եղել Հայաստանին նվիրված երեկոն՝ Լիոնի քաղաքապետարանի կողմից կազմակերպված հատուկ ընդունելությամբ:

Ֆրանսիացի գործընկերների հետ աշխատանքային հանդիպումների և մասնավոր գրույցների ժամանակ և Գրենոբլի «Հողաշեն ճարտարապետության միջազգային կենտրոն»-ի՝ CRAterre-ի ղեկավարի հետ զրուցելիս՝ «Էրեբունի» արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանն ամրապնդել է նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունը համագործակցության վերաբերյալ՝ հատկանշելով, որ հում աղյուսը «Էրեբունի» և «Կարմիր բլուր» ուրարտական ամրոցների կառուցման հիմնական շինանյութ է հանդիսանում,



իսկ այդ հնավայրերից հայտնաբերված նյութերը լայնորեն բացահայտում են ուրարտացիների կողմից կավի օգտագործման հնարավորությունները, նրա բաղադրության, գույնի, ֆիզիկա-քիմիական և մեխանիկական հատկությունների մասին առանձնահատկությունները:

Արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանը կարևորել է ս.թ. հունիս-հուլիս ժամանակաշրջանում CRAterre-ի մասնագետի կողմից Էրեբունի հնավայրում

իրականացրած գործնական դասընթացը հում աղյուսի պատրաստման նյութի և մեթոդի օգտագործման վերաբերյալ, որին մասնակցել են Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ուսանողները և «Էրեբունի» թանգարանի աշխատակիցները՝ ստանալով համապատասխան որակավորման վկայականներ:



Այս խնդիրը առավել հրատապ է դառնում Էրեբունի-Երևանի 2800-ամյակի տոնակատարության շեմին /2018թ./՝ լայնածավալ վերականգնման աշխատանքների իրականացման ծրագիրը կյանքի կոչելու գործում:

Գ. Գյուրջյանն անդրադարձել է Ֆրանսիացի հնագետների հետ դեռևս 2008թ.-ից հաստատված համագործակցության՝ Էրեբունի ամրոցում համատեղ արշավախմբով պեղումներ իրականացնելու հաջողված փորձին և ընդգծել, որ նշյալ համագործակցության շրջանակը կարելի է ընդլայնել՝ Ֆրանսիայի CRAterre-ի և հողաշեն ճարտարապետության պահպանության խնդիրներով զբաղվող այլ կառույցների հետ հում աղյուսի վերաբերյալ ուսումնասիրություններ անելով,



ինչն էապես կնպաստի հողաշեն ժառանգության պահպանությանը, նրա արդիականության հնարավորությունների զարգացմանը: